



ԱՌԱՋՆՈՐԴԱՐԱՆ ՀԱՅՈՑ
ՀԻՄՆԻՍԱՅԻՆ ԱՍԵՐԻԿԱՅԻ ԱՐԵՄՏԵԱՆ ԹԵՄԻ
WESTERN PRELACY
OF THE ARMENIAN APOSTOLIC CHURCH OF AMERICA
 Archbishop Moushegh Mardirossian, Prelate
 Tel: 818-248-7737/8, Fax: 818-248-7745, E-mail: Prelacy@aol.com



ՀԱՂՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ

**ԱՌԱՋՆՈՐԴ ՍՐԲԱՉԱՆԸ ՄԱՍ ԿԸ ԿԱԶՄԷ
 ՀԱՅԱՍՏԱՆ-ՍՓԻՒՔ Գ. ԽՈՐՀՐԴԱԺՈՂՈՎԻՆ
 ՄԱՍՆԱԿՑՈՂ Ս. ԱԹՈՌՈՅՍ ՊԱՏՈՒԻՐԱԿՈՒԹԵԱՆ**

Այսու կը հաղորդենք մեր հաւատացեալ ժողովուրդին, որ պաշտօնական հրաւերներու ընդառաջելով, Թեմիս բարեխնամ Առաջնորդ Բարձր. Տ. Մուշեղ Արք. Մարտիրոսեան Կիրակի, 17 Սեպտեմբեր 2006ի երեկոյեան Հայաստան պիտի մեկնի, մասնակցելու համար Հայաստան-Սփիւռք երրորդ խորհրդաժողովին: Առաջնորդ Սրբազանը Երեւանի մէջ պիտի միանայ Մեծի Տանն Կիլիկիոյ Ս. Աթոռի գահակալ Ն.Ս.Օ.Տ.Տ. Արամ Ա. Կաթողիկոսի գլխաւորութեամբ սոյն համագումարին մասնակցող Ս. Աթոռի պատուիրակութեան եւ Ն. Ս. Օծութեան շքախումբին:

Ծանօթ է, որ այս երրորդ խորհրդաժողովի քննարկման գլխաւոր հարցերն են Հայաստան-Սփիւռք գործակցութեան զարգացման կարելիութիւններն ու հայրենի սահմանամերձ գիւղերու տնտեսական զարգացման ծրագիրները:

Էռօրեայ խորհրդաժողովին կողքին, Առաջնորդ Սրբազանը մասնակից պիտի ըլլայ Վեհափառ Հայրապետի շրջապտոյտին ու տեսակցութիւններուն, յէջմիածին եւ այլուր: Ան նաեւ ներկայ պիտի ըլլայ Հայաստանի անկախ հանրապետութեան վերահաստատման 15-ամեակին նուիրուած հանդիսութիւններուն ու ձեռնարկներուն:

ԴԻՒՆ ԱԶԳԱՅԻՆ ԱՌԱՋՆՈՐԴԱՐԱՆԻ

PRESS RELEASE

**PRELATE TO PARTICIPATE IN THE
 THIRD ARMENIA-DIASPORA CONFERENCE**

Upon official invitations extended to him, H.E. Archbishop Moushegh Mardirossian, Prelate, will depart for Armenia on Sunday, September 17, 2006, to join the entourage of His Holiness Aram I, Catholicos of the Holy See of Cilicia, at the third Armenia-Diaspora Conference.

The main topics of discussion at this year's conference will be the development of cooperation between Armenia and the Diaspora and rural development in Armenia.

Alongside the three-day forum, the Prelate will accompany His Holiness on his travels and meetings at Etchmiadzin and elsewhere. His Eminence will also participate in celebrations and events dedicated to the 15th anniversary of the declaration of independent Armenia.

DIVAN WESTERN PRELACY